ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆՀՄԱԾՁԲ-19/32

ք. Երևան «25» սեպտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Առաջ Արցախ>> երիտասարդական ՀԿ-ն, ի դեմս նախագահ Ա. Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել **երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են ս.թ. հուլիսի 23-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 8553600 (ութ միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ք. Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005114 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	<<Առաջ Արցախ>> երիտասարդական ՀԿ Ք. Ստեփանակերտ, Մաշտոցի 5ա, Արցախբանկ ՓԲԸ Հ/Հ 22310028704200 ՀՎՀՀ 90032517 Նախագահ՝ ---------- Ա. Հայրապետյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«25» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՀՄԱԾՁԲ-19/32 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը
1	55241300/11	Երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայություններ	**Ճամբարն իրականացնում է՝** 1.Երեխաների գեղարվեստական, ճանաչողական և գեղագիտական ճաշակի ձևավորմանը, 2.բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, ընկալման և ընբռնման գործընթացների ձևավորմանը, 3.ազգային ավանդույթների և արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը, 4.Երեխաների աշխատանքային, բնապահպանական, բարոյական, գեղագիտական, հայրենասիրական ու կարգապահական դաստիարակությանը, ինչպես նաև՝ ինքնադաստիարակության խթանմանը, 5.ընդհանուր մտածողության զարգացմանը, 6.աշխատելու և հանրօգուտ աշխատանքներ կատարելու մղումների ձևավորմանը, 7.ստեղծագործական ունակությունների զարգացմանը, 8.անհատականության ձևավորմանը, 9.շրջապատի, շրջակա միջավայրի և բնության նկատմամբ ուշադրության զարգացմանը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, 10.դպրոցում ձեռք բերած գիտելիքների ամրապնդմանն ու կիրառմանը, 11.կիրառական գիտելիքների ձեռքբերմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ինքօգնություն և առհասարակ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը և դրանց կիրառմանը, 12.ֆիզիկական դաստիարակության իրականացմանն ուղղված ծրագրեր:	դրամ	1	8553600	**1-ին հերթափոխ՝** 23.07.2019թ.-01.08.2019թ. **2-րդ հերթափոխ՝** 01.08.2019թ.-11.08.2019թ.

1.Երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայությունը՝

- կազմակերպվում է վրաններում և ճամբարային հավաքների համար նախատեսված շինություններում՝ հիմնված մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ձևավորման և կրթության աշխարհիկ սկզբունքների վրա,
- **Նախատեսված** է ավագ դպրոցի աշակերտների համար:
- **Նպատակ ունի** Երեխաների հոգևոր-բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, աշխատանքային և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները և նախասիրությունները:
- **ունի՝**

  ա) Նյութատեխնիկական համապատասխան միջոցներ՝ Երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար,

  բ) օրվա կարգացուցակ և Ճամբարային ծրագիր՝ հաստատված տնօրենի կողմից:

  գ) հերթափոխի ուղեցույց՝ հաստատված ճամբարի տնօրենի կողմից:

դ) Ամառային հանգիստը կազմակերպվում է 2 հերթափոխով (ընդամենը 160 երեխա), յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը 10 օր է: Մեկ հերթափոխում հանգստանում են 80 երեխա:

2.Ճամբարի կառուցվածքը

Ճամբարի ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

Ճամբարն ունի ավագ մանկավարժ/ներ/ և դաստիարակ/ներ/

Ճամբարի ավագ մանկավարժ/ներ/ը և դաստիարակ/ներ/ը պետք է ունենա մանկավարժի որակավորում:

Ճամբարը բաժանված է ջոկատների /յուրաքանչյուր ջոկատում առնվազն 10 երեխա/, յուրաքանչյուր ջոկատ կարող է ունենալ առնվազն 2 ջոկատավար /ջոկատավարներին ներկայացվող պահանջները հաստատվում են ճամբարի տնօրենի կողմից/:

Երեխաների առողջության ապահովման նպատակով ճամբարում պետք է գործի շուրջօրյա բուժ ծառայություն՝ բժշկական անձնակազմով /բժիշկ, բուժքույր/:

Ճամբարն ունի նաև սպասարկող անձնակազմ /հավաքարար, վարորդ, պահակ, լվացարար, էլեկտրիկ, օժանդակ բանվոր/ որոնց քանակը որոշում է ճամբարի տնօրենը՝ ելնելով ճամբարի ծանրաբեռնվածությունից:

Ճամբարն ունի երաժշտությունն ապահովող տեխնիկական միջոցներ և անձնակազմ:

Ճամբարի անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ճամբարի տնօրենի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ելնելով աշխատանքի բաշխվածությունից:

Ճամբարի կառուցվածքը, ճամբար-ծնող փոխհարաբերությունների կարգը, երեխաների վարքականոնները, ճամբար մեկնող երեխաների անհրաժեշտ պարագաների ցանկը և ճամբարի օրակարգը հաստատում է ճամբարի տնօրենը:

3.Ճամբարում գործող բուժկետը պետք է համալրված լինի անհրաժեշտ գույքով և առաջին անհրաժեշտության դեղորայքով:

4.**Սննդի կազմակերպումը**

Ճամաբարում երեխաներին տրվող սնունդը կազմակերպվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014 թ. N 32-Ն որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգենիկ պահանջներ>> N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին հրամանի հավելվածի (այսուհետ՝ կանոններ) 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ և 27-30-րդ կետերի համաձայն:

Խոհարարական արտադրանքի պատրաստումը կազմակերպվում է համաձայն Կանոնների 31-42-րդ կետերի պահանջներին համապատասխան:

Սննդի կազմակերպման հսկողությանը ներակայցվող պահանջները սահմանված են Կանոնների 48-67 կետերում:

Ճամբարում չի կարող կազմակերպվել լրջացուցիչ (բուֆետների միջոցով կազմակերպվող) սննդի մատուցում:

5.ՀՀ պետական պատվերի շրջանակներում ծառայություն իրականացնող ճամբարում այլ ծառայությունների իրականացումը բացառվում է:

6.Տեխնիկական չափանիշները

Ճամբարը պետք է ունենա համապատասխան վրաններ (առնվազը 80 երեխայի համար)՝

- Վրանները պետք է լինեն բարվոք վիճակում,
- խաղերի և մարզական միջոցառումների համար նախատեսված առնվազն **2 սպորտհրապարակ** /խաղահրապարակ/,
- **մեկ բացօթյա ճաշարան առնվազն 80 աշակերտի և 8 աշխատակիցների համար**,
- պետք է ունեն համապատասխան **լվացարաններ, լոգարաններ և լվացքատուն**,
- **հագուստի մաքրման սենյակ՝ համաձայն** ՀՀ Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 15-րդ կետի/,

7.**Կատարողի աշխատակազմը** պատասխանատու է ճամբարում կրթադաստիարակչական ծրագրի անխափան իրականացման համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ա. Հայրապետյան

Հավելված N 2
«25» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՀՀԿԳՀՄԱԾՁԲ-19/32 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև 30ը/	Ընդամենը
1	55241300/11	Երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայություններ-1			8553600	8553600	8553600	8553600	8553600

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ա. Հայրապետյան